

գործքը՝ որուն յոյն բնագիրը հիմայ մէջտեղ չկայ: Թարգմանութեան լեզուն 5^{րդ} դարու առաջին կէսին նկարագրական եղած լեզուն է՝ որն որ անկէ ետքը անմասնելի մնացած է: Արդ Հայոց կաթողիկոսը իր թղթոյն ան մասին մէջ՝ ուրիշ բան չընելու բայց եթէ զԱւագրիտս ընդօրինակել անանկ նիւթապէս որ վերջերք կը շարունակէ օրինակելու նաեւ անանկ հատուած մը՝ որն որ իր առաջարկեալ նիւթին հետ ամենեւին կապակցութիւն չունի:

Վնենք մէկը մէկալին զիմաց:

Ե Ի Ա Գ Բ

Մտնող, Միւթ . Այեւ. Թխ. 33 եւ 12 Դ:

Հաւատք որ ի Նիկիա հաստատեցան: Հաւատամք ի մի Աստուած ամենակալ, յարարիչ երկնից եւ երկրի, աներեւոյթ եւ երեւելի արարածոց, եւ ի մի տէր Յիսուս Բրիստոս Որդի Աստուծոյ Միածին, այս ինքն ի գորութենէ չօր, որով ամենայն ինչ եղև. Աստուած որ յԱստուծոյ, լոյս որ ի լուսոյ անտի ծնեալ եւ ոչ եղևալ, միազօր չօր որ վասն մարդկան էջ եւ մարմին զգեցաւ, շարձարեցաւ, յերիւր աւուր յարեալ, եւ յերկինս, եւ զայ միւսանգամ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի Հոգին սուրբ կենդանի:

Այլ որք ասնն եթէ էր երբեմն, զի չէր իսկ, եւ յառաջ քսն զծնունդն չէր իսկ, եւ ի չէութենէ եղև իսկ, կամ յայսմէ իմեմէ գորութենէ կամ ի գոյութենէ, կամ անցանելով է կամ եղծանելով է, զայնպիսին նզովեմք:

Այլ եւ զՆերսիսութիւնն Մաքեդոն որ ասէ եթէ նոյն իցէ Հայր եւ Որդի եւ Հոգին սուրբ, այլ զՀայր գիտեմք Հայր, եւ զՈրդի՝ Որդի, եւ զՀոգին սուրբ՝ Հոգի, մի թագաւորութիւն, մի տէրութիւն, մի գորութիւն, մի աստուածութիւն:

Դարծեալ նզովեմք զՓոտինեայ հաւատմն, որ ասէն եթէ ի Մարեմայ է ծնեալ Յիսուս, եւ էր երբեմն՝ զի չէր Որդի: Չի միշտ Հայր եւ միշտ Որդի եւ միշտ Հոգի աստուածողէն, Հոգի սուրբ, կատարեալ, բարեկիստ, առանց անելոյ, այլ էր իսկ, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յառաքեալս եւ էջ ի Յորդանան գետ:

Այլ վասն մարդկախառն աստուածութեանն Որդւոյ այսպէս հաւատամք եթէ զգեցաւ զմարդն կատարեալ յաստուածածնէն Մարիամայ Հոգւովս սրբով

Ս Ա Ն Ա Կ

Սոփեոք Հայկախանք, Բ. էջ 140:

“Այլ մեր հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչ երկնից եւ երկրի, երեւելի եւ աներեւելի արարածոց, եւ ի մի տէր Յիսուս Բրիստոս ի Միածին Որդին Յիսուս, այս ինքն էութիւն յէութեան, էութիւն ծնեալ, որով ամենայն եղև, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակից չօր, որ վասն մեր մարդկութեամբ էջ եւ մարմնացաւ, յանձն առ շարձարմնս, յարեալ յերից աւուրց, եւ եւ յերկինս, եւ զայ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի սուրբ Հոգին հաւատամք:

Իսկ որ ասնն էր երբեմն, զի չէ(ր), մինչ չև ծնեալ էր՝ չէր, եւ ասնն (ի) չէութենէ եղև եւ յայսմէ իմեմէ գորութենէ եւ կամ եղծանելով եւ փոփոխելով, զայնպիսին նզովեմք:

Չի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ սուրբ Հոգին, Հոգի Աստուծոյ, կատարեալ, բարեկիստ, անստեղծ, անեղծ, որ խօսեցաւ օրհնոց եւ մարգարեիք եւ առաքելովք եւ էջ ի Յորդանան:

Եւ վասն մարգարէութեանն (Կ-ր-դ-մ) մարդկութեանն) Որդւոյ այսպէս հաւատամք, զի առ յանձն լինել մարդ կատարեալ սրբով Հոգով, ասեալ շունչ եւ մարմնն ծնարտիւ շարձարեցաւ. ոչ